ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

ի պատասխան Ձեր 02.01.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից ապրանքանյութական արժեքների, այդ թվում՝ բույսերի և տնկանյութի ձեռքբերումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն կազմակերպված գնման գործընթացի միջոցով, որին կարող է մասնակցել ցանկացած տնտեսվարող անկախ այն բանից, թե ՀՀ «Հարկային օրենսգրքի» համաձայն որ հարկման համակարգի շրջանակներում է գործունեություն ծավալում: Հետևաբար գնման գործընթացին մասնակցող մատակարարի կողմից ներկայացվող գնային առաջարկների մեջ կարող է նաև ներառվել ԱԱՀ-ը: ՀՀ «Հարկային օրենսգրքի» նշված հոդվածի (64-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետ) արտոնությունը կարող է վերաբերվել միայն մատակարարող (վաճառք իրականացնող) տնտեսվարողներին իրենց գործունեության շրջանակներում, իսկ ԱԱՀ-ն օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է վճարման ՀՀ պետական բյուջե որպես պետական հարկ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ